

## Մի թուպե

Ես ունեի իմ փոքրիկ ուրախությունները: Որոնք հեշ էլ փոքրիկ չէին: Դրանք իմ աշխարհի մի փոքրիկ ու անփոխարինելի մասնիկն էին:

Ես սիրում էի առավոտները մեն- մենակ սուրճ խմել, երբ աշխարհը նոր էր արթնանում: Մենակ ու անտրուսիկ: Ընդհանրապես ինձ միշտ էլ հետաքրքրել են սկզբնական վիճակները: Ու անտրուսիկ լինելը դրանցից մեկն էր:

Միօրինակ ու արտաքուստ շատ սովորական թվացող այդ գործողությունն իրականում բոլորովին էլ աննշան մի բան չէր: Այն խորհրդանշում էր Տաիշայի ազատ լինելու ու մենակ-անտրուսիկ սուրճ խմելու շատ պարզ ցանկությունը:

Ես ունեի իմ փոքրիկ ուրախությունները: Որոնք նվաճել էի կյանքիս 48 երկար ու ձիգ տարիների պայքարի ընթացքում:

\*\*\*

-Բարև ձեզ:

Գիշեր էր ու դեմքը լավ չտեսա: Բոյով ու լոյլող մի տղա էր, կողքն էլ ձեռից բռնված մի երեք տարեկանաչափ երեխա:

Ռոպե առաջ աշխարհիս դուռը բացելու անհամբերության սպասումներով՝ համարյա վազում էի, ու ջահելի բարևը տեղ հասավ, երբ նրանից մի քանի քայլ անցել էի: Շրջվեցի:

-Բարև: Մենք ծանոթ ենք:

Չէի ուզում առաջանալ, իսկ ինքն էլ՝ աշխարհին տիրելու զգացողությունը դեմքին շպարած կանգնած էր՝ կողքն էլ ձեռից բռնված մի երեք տարեկանաչափ երեխա:

Երևի 48 վայրկյան անթարթ նայեցինք իրար, մինչև կհասկանայի՝ ծանոթ ա, թե ուղղակի աղջիկ կպցնելու ամենասովորական ու ոչ մի հետաքրքիր զարգացումներ չխոստացող լիոզված մի տիպ:

Կազնած տեղից ինչ-որ բան քրթմնջաց, որից եզրակացրի. «վերջին տարբերակն ա»: Ափսոսացի էդ 48 վայրկյանը, որ ծախսել էի լոյլող բոյը տնտղելու համար ու անցա առաջ:

\*\*\*

Չէ՛: Միշտ էլ իմացել եմ, որ աշխարհը շատ ավելի մեծ ա էն տիրույթից, որը կարա ընդգրկի Տաիշայի ֆիզիկական աչքերը: Բայց էդ կապ չունեի իմ աշխարհի հետ: Իմ աշխարհը իմ տունն էր, որտեղ ոտք դնելուց հետո դուռը փակվում էր ավամ աշխարհի ու, մասնավորապես, հարևաններիս առաջ, որոնց չափազանց

հետաքրքիր աչքերը հետևիցս տուն սողոսկելու ցանկությամբ ուղեկցում էին մինչև աշխարհիս դուռը, բայց այդ նույն դուռը միշտ էլ շրխկում էր իրանց քթի տակ:

Իմ աշխարհը իմ տունն էր, որտեղ միապետ էի բոլոր ոլորտներում: Դրա համար վճարել էի ճիշտ այնքան, ինչքան պահանջել էր ՏԵՐԸ ու բոլորովին էլ չէի պատրաստվում այն կիսել ուրիշների հետ:

Սիրում էի տանս ամեն մի անկյունը. կավե ամաններում աճող ծաղիկներս, աման-չամանս, կահույքս, վարագույրի վրա անկապ խփած դպրոցական բանդիկս, բաց պատշգամբս ու լվացքի պարաններին թառող տատրակներին, էժանագին գորգս, կոմպիս կողքը դրած արևելյան անուշահոտություն վառելու համար նախատեսված փայտյա գեղեցիկ իրը, որի համար Սիեթլում վճարել էի կլոր 10 դոլար՝ առանց տաքսի, Վայո լեփթոփս, լեն ու բոլ կառավաթս, տրիմոյի վրա դրած ֆրանսիական դուխիս, վաննիս կողը շարած զարմանազան անուշահոտություններն ու յուղերը, չօգտագործված հեռուստացույցս... աշխարհս ոտ չդրած սպասված, բայց դեռևս չժամանած հյուրին... քեզ...

Սիրում էի ամառները աշխարհումս թրև գալ միայնակ ու անտրուսիկ: Վրես գցում էի երկար, փեշերը ծնկներիցս ահագին վերև կտրած պլեչիկավոր մի շոր, որը շատ տարիներ առաջ առել էի Բանգլադեշի տոնավաճառից ու վճարել կլոր 3000 դրամ, ու, որն էնքան կարճ էի կտրել, որ մի թեթև կռանալուց սաղ էղած- չեղածս տակից երևում էր: Տանձիս: Աշխարհիս միակ բնակիչն էի ու ինձ միշտ էլ դուր են էկել սկզբնական վիճակները: Համ էլ տենց հով էր:

\*\*\*

-Մի րոպե հա՞:

Ցերեկ էր: Ամառվա ամենաշոգ ցերեկներից մեկը: Կողից նայեցի: Մի լոյլող տղա հետս հավասար կողքովս քայլում էր: Լրիվ անծանոթ էր: Հանձար պետք չէր լինել՝ հասկանալու համար, որ ուղղակի խոսացնում ա: Էս օրերին էդ երևույթը ոչ մի տրամաբանության մեջ չի տեղավորվում: Ու քեզ հատկացված չափազանաց կարճ ժամանակիցդ ոչ մի վայրկյան էլ չես ուզում ծախսես մի մեկի վրա, ով աշխարհից էդքան հետ ա մնացել: Շարժվում են առաջ: Սա հետս:

-Մի րոպե, հա՞:

Մտնում են խանութ: Առևտուր են անում: Սա սպասում ա: Հաջորդ խանութը: Ինքը դեռ կանգնած ա: Մոտենում են շենքիս ու աշխարհս վերևից արդեն աչքով ա տալիս: Մտնում են կողքի մուտք: Սա հետևիցս: Հաշվարկս սխալ էր: Ենթադրեցի, որ հետևիցս չի բարձրանա՝ մտածելով, թե հասել են տեղ: Էկավ, ու ես ստիպված հետդարձի ճամփա բռնեցի: Փակ էր: Դենս ցցված էր լոյլող մի տիպ: Փաստորեն, ստիպեց, որ նայեմ աչքերի մեջ: Ինքն էլ իրա աշխարհի մի մասնիկն էր ու այդ աշխարհի լիակատար մասնիկը լինելու իրա համարումը պահանջում էր ուշադրությունս: Ստիպված էի լսել:

Անհմաստ բարբաջում էր: Ուրիշ ոչինչ էլ չէր կարելի ակնկալել մի լոյլողից, ով էս պուճուր աշխարհում աղջկա հետ ծանոթանալու ուրիշ ձև չէր գտել, բացի մի ճանապարհից, որի սկիզբն ու անփառունակ վախճանն ի սկզբանե կանխորոշված էր:

Ահավոր շոգ էր, ու ես առանց էդ էլ տուն էի վազում, որ սառնարանում ինձ սպասող ջուրը քաշեմ գլխիս: Սա շարունակում էր բարբաջել առ այն, որ ինձ լրիվ լուրջ նպատակներով ա մոտեցել, այսինքն՝ պսակվելու: Ու էդ ասելիս՝ առանց էդ էլ շատ լուրջ դեմքն ընդունում էր չափազանց լրջի ամենահինարավոր երանգներն ու էդ կարգի լրջությունը գունարվելով շոգին՝ ճակատիցս քրտինքի առվակներ էր հոսեցնում: Ջգում էի, որ սիրտս կամացից վատանում ա, իսկ ես մանրից կատաղում եմ:

Փորձում եմ դուրս պրծնել: Սա դեմս փակում ա:

-Լսի, ուրեմն ինչ եմ ասում: Մի թոպե, հա՞: Մի թոպե: Ես կարգին տղա եմ ու աղջկա չեմ անհանգստացնի: ՄԻ ՐՈՊԵ: Լսի լը: Ես կարգին տղա եմ: Դու տենց կողքերդ մի նայի, է՛: Ես լուրջ բան ունեմ քեզ ասելու: Մի թոպե: Ես ուզում եմ ստեղից էթամ ու ինձ աղջիկ ա պետք, որ հետը զագսավորվեմ: Ես քեզ լուրջ առաջարկություն ունեմ անելու:

Ստեղ արդեն չեմ մտածում, թե սրա խելքը զգած ա, ոչ էլ էն, որ անասուն ա: Բան էլ չեմ մտածում: Մենակ ուզում եմ էթամ տուն: Աշխարհս ինձ էր սպասում: Գեշ ձկի կոպտում եմ: Տանձին չի: Ձե՛նս գլուխս եմ զցում:

-Կամա՛ց: Մի՛ գոռա: Մարդիկ կլսեն: Մի՛ թոպե: Բան ունեմ ասելու:

Փաստորեն, իրա տղա հալով հլը ինքն էր մտածում, թե մարդիկ կլսեն: Այ, քեզ 48 տեսակի բան: Սարսափելի կոպտեցի: Մտածելով, որ ախմախը կջոկի թե սիրուն-միրուն արտաքինի տակինը նույնը չի ու ճամփեն կշարունակի: Բայց լոյլողը դրա փոխարեն աչքերը թըցրել էր քյալլեն առ էն, թե ինչքան կոպիտն եմ:

-Սիրտս հեսա ստեղ կվատանա,- ասում եմ:

- Զէ՛, չեմ թողի, որ վատանա: Ուզո՞ւմ ես ջուր բերեմ,- բարբաջում ա:

-Հա՛, ուզում եմ:

-Զե՞ս խաբում:

-Զէ՛:

- Զէ, որ էթամ ջրի, կեթաս տուն:

Այ քեզ փորձանք: Ջգալով, որ արունը խփում ա քունքերիս ու հասկանալով, որ սույն լոյլողի ուղեղը չի ենթարկվում ինձ ծանոթ տրամաբանությանը, այլ հակառակը գործում ա Տաիշին լրիվ անծանոթ կանոններով, ուրիշ կերպ ասած՝ պարզապես

տրամաբանություն չկա, համբերությունս կորցրի ու դրան մի յանի բողբոջով՝ ճամփեն բացեցի:

-Բայց ի՞նչ կոպիտն ե՛ս:

- Դե սիկտի՛ր, տանձի գլուխ: Տանձակոթ: Տանձածեր: Տանձուտի մեջի ամենաքնձռոտ տանձատեր:

Արևը դրսում պայծառ շողում էր, ու աշխարհը դրանից մի ուրիշ տեսակ աչքիս քաղցրացել էր:

\*\*\*

Երբ ոտս դրի տուն, էդ մասին միանգամից մոռացա: Դուռս հերթական անգամ շխկաց, ու հայտնվեցի աշխարհի իմ ամենասիրած վայրերից մեկում: Իմ աշխարհում էի: Էնտեղ ինձ ապահով էի զգում ու բոլորից պաշտպանված: Ինչպես նաև ազատ՝ անելու ինչ կամ ոնց կուզեմ: Կարող ա ուզում եմ գլխիս վրա 48 թուպե կանգնել՝ մերկ ու անտրուսիկ: Ու՞մ՝ ինչ: Ես գնել էի իմ ազատությունը՝ դրա համար վճարելով 48 ծիծիլիոն մեզաջրով էներգիա:

Շորերս շարտելով որը որտեղ հասնի, մի բան կերա ու նստեցի կոմպիս առաջ: Ֆեյսբուքը դարձել էր աշխարհիս մի փոքրիկ բաղկացուցիչ մասը: Դա մանր, բայց միաժամանակ հսկա ուրախություն էր:

Աչքերս սահեցրի սենյակիս ձախակողմյան անկյունում գտնվող գրապահարանի վրա ու մտովի շոյեցի մտածված կարգով վրան դասավորված փոքրիկ իրերը: Դրանից սիրտս անասելի ուրախություն ապրեց:

Ես ունեի իմ փոքրիկ ուրախությունները, որոնք ուրիշների համար միգուցե հեչ ոչ մի արժեք էլ չունեին: Իմ աշխարհն էլ ուրիշներից չափազանց տարբեր էր: Ես սիրում էի սկզբնական վիճակներն ու էդ հեչ էլ չէր նշանակում, թե էդ ընտրությունն ուրիշներից լավն ա: Էդ պարզապես իմ ընտրությունն էր:

\*\*\*

Ամեն օր նույն ճամփով գնում էի գործի ու հիմնականում մի ժամի հետ գալիս տուն: Ամեն ինչ շատ կոպիտ ֆիքսված չէր, բայց ցանկության դեպքում՝ օրինաչափությունը տեսնելու համար գիտնական լինել պետք չէր:

Ու շատ շուտով ջահելին նորից տեսա: Ես անգամ արդեն լրիվ նագլիացել ու հետևիցս բարձրանում էր վերև: ԴԵՊԻ ԻՄ ԱՇԽԱՐՀ: Պատկերացնում ե՞ք:

Ուրմեն, ջահելը՝ բոյով ու նիհար, դեմքի շագանակագույն տհաճ մաշկով, վրան մի զույգ ոչ մի բան չասող աչք ու տպոյ հայացքով անգույն դատարկություն էր: Ինքն էն աստիճանի անհրապույր անձ էր, որ ոչ մի արտասովոր շտրիխ չեմ մտապահել, որ ավելացնեմ իրա կերպարը կերտելուց: Բացի, իհարկե, կատաղության հասցնող անտրամաբանական վարքից:

Ուրեմն, ջահելը, նույնիսկ շատ վախկոտ ջահել էր, որովհետև, երբ երրորդ հարկի վրա ֆիքսեցի հետևիցս եկող ոտնաձայներն ու տեսա սույն լոյլողին՝ նորից բարձրաձայն կոպտեցի, ու սա վախենալով, որ ձայնիս վրա հարևաններ կարող ա դուրս գան, ոչ միայն չառարկեց, որ ինքը դեբիլ չի, այլև՝ գլխիկոր իջավ:

Բայց ստեղ հասկացա, որ այդ անձնավորությունը խախտում ա գծած սահմաններն ու թքած ունի վրես: Ինքը փորձում էր մտնել աշխարհս ու իմ հետ կապված որոշակի պլաններ ուներ: Էդ գաղափարը, մեղմ ասած, ինձ իհարկե հեչ դուր չէր գալիս, ու ելքից դուրս գալու միջոցներ էի որոնում:

Արդեն հասկացել էի, որ ջահելի տանձին չի կոպտելս: Նրա կռիվը շատ պարզ մարտավարություն ուներ: Հետևում էր էնքան վախտ, մինչև շրջակայքում մարդ չէր լինում ու էդ վախտ մոտենում էր: Իրան չէր հետաքրքրում, որ ցանկություն չունեի իրա գոյությունը նկատելու: Դաժե չգիտեմ էլ, թե ոնց էր պատկերացնում նման իրավիճակում որևէ կոնտակտ հետս: Մարդկային էդ տեսակի հետ շփվելու փորձ ուներ: Իրանց վրա ազդելու միակ ձևը գլուխը ցխելն ա: Ծիծիլիոն տոկոս:

Մենք համեմատվելու ոչ մի եզր անգամ չունեինք: Ժամանակակից տեխնալոգիաներն էնքան են նեղացրել աշխարհի սահմանները, որ մարդու մասին ինչ-որ բան իմանալու համար պարտադիր չի, որ հարևանիդ յոթ պորտ հեռու բարեկամը մասոնական լոժայի անդամ լինի:

Նման պարագայում, եթե լոյլողի գլխում տեղավորվել էր էն հանճարեղ միտքը, որ հետս մի սենյակում նույն օդը շնչելու ցանկությունը կարելի էր տեսականից վերածել գործնականի,մի բացատրություն ուներ միայն: Ջահելի գլխի շարիկները էն գլխից պակաս են էղել, ու ես ոչ մի ցանկություն էլ չունեի վրաս վերցնելու պակասող շարիկները լրացնելու անշնորհակալ ու անարդյունավետ աշխատանքի պարտականությունը:

Պետք էր սպասել տեսնելու համար, թե արդյո՞ք ջահելը կհասկանա իրավիճակի լրջությունն ու ճամփեն կշարունակի: Ինտուիցիաս հուշում էր, որ՝ ոչ:

Զսխալվեցի:

\*\*\*

Սաղ խնդիրն էն էր, որ ջահելը փչացրել էր տրամադրությունս: Հետդարձի ճանապարհս փոխել էի ու դարուփոս ճամփեքով էի էթում տուն: Էդ արդեն ներվերիս վրա ազդում էր:

ՈՒՐԵՄՆ ԻՐԱ ՊԱՏՃԱՌՈՎ ԸԱՄՓԵՍ ՓՈԽԵԼ ԷԻ:

Զէի կարող էլ մտնեի ճամփիս վրի խանութները, որտեղից միշտ եմիշ կամ ելակ էի առնում: Հա՛: Եմիշ շատ եմ սիրում: Ինչպես նաև՝ լիքը կլուբնիկ: Դրանք իմ փոքրիկ ուրախությունների մի շատ փոքրիկ մասն էին: Մի անգամից կարող եմ մի էրկու կիլո ելակ կամ մի մեծ եմիշ ուտել: Օխայ՛: Շատ համով ա: Կլուբնիկը չեմ սիրում լվալ:

Ուտում եմ հենց տենց: Սկզբնական վիճակներով: Ի՞նչ: Կեղտո՞տ ա: Կեղտոտն էր ջահելն էր, ում գլուխն ավելի տհաս էր, քան կանաչ եմիշը:

Բայց ինքը, երևի ինչ-որ մի բան, այնուամենայնիվ, արժեր: Թեկուզ հենց էնքան, որ անձնավորվել էր ու դարձել գրական կերպար: Փաստորեն, ջահելն էնքան կար, որ իր մասին գրում էի:

Աշխարհումս մի բան փոխվել էր: Ու շատ լավ հասկանում էի դրա պատճառը: Խոհանոցի կահույքից կախված ընկերուհուս սարքած դսմաթիկը օրորվում էր ինչպես միշտ: Իսկ նույն դսմաթիկին ամրացված կավե զանգակը՝ քանու հարվածից նույնպես ղողանջում էր առաջվա պես: Բայց դրանք դադարել էին ինձ պատճառել առաջվա ուրախությունը:

Տանս մեջ ազատ չէի ու սույն ջահել՝ ը աննկատ, մտքերիս արանքներով սողոսկել էր աշխարհս ու ազդում էր ամենօրյա փոքրիկ ուրախություններս վայելելու ծեսի վրա:

\*\*\*

Նորից առավոտ էր: Էլի անտրուսիկ էի ու հագիս էլի նույն պլեչիկավոր կարճ շորն էր: Լվացվեցի ու ատամներս լվացի: Հետո մանր-մունր քայլերով գնացի խոհանոց: Սուրճ դրեցի ու դուրս էկա պատշգամբ: Շատ եմ սիրում իմ պատշգամբը: Դրա միակ վատ կողմն էն ա, որ դիմացս շենք կա, ու երբեմն դիմացի շենքից որոշ հետաքրքրասեր հայացքները փորձում են մասնակից լինել առավոտվա սուրճի արարողակարգին: Կոպտում եմ: Մարդիկ հասկանում են:

Բայց էդ օրը ամեն ինչ ուրիշ էր: Հասկացա, որ ՊԵՏՔ ԷՐ ՄԻ ԲԱՆ ԱՆԵԼ:

Միշտ էլ կարելի է չնկատել կամ չնկատելու տալ մարդկանց այս կամ այն հատկանիշներն ու դա ձևակերպել «ներել» եզրով: Ու ասել, որ շատ բան կարող եմ «ներել» շատ մարդկանց: Ասենք, օրինակ, նույն մարդկանց հորինած սուտն ու կեղծիքը, դավաճանությունն ու այդօրինակ զարմանազան այլ անհեթեթությունները: Կարող եմ հասկանալ մարդկանց, փորձել՝ աշխարհը տեսնել իրենց պրիզմայով կամ գտնել ինչ-որ համատեղ լուծումներ: Բայց կան «սահմաններ», որոնցից անդին բոլորի մուտքն արգելված է: Կարծում եմ, որ բոլոր մարդիկ էլ «սահմաններ» ունեն:

Մի խոսքով հասկացա, որ պետք էր մի բան անել: Որոշումն ընդունված էր: Մնում էր ի կատար ածել:

\*\*\*

Օրը սովորական էր ու օդում ոչ մի տարօրինակ նոտաներ էլ չկային: Նույն ձևի գնացի գործի ու հետ էկա տուն: Ընթացքում շատ ծիծաղել էի, ու ոչ մեկ չէր նկատել աչքերիս մեջ հասունացած որոշումը: Համակ բարություն էի: Բոլորի հետ առանձնակի սիրալիր էի ու դա ոչ ոքի էլ զարմանք չպատճառեց: Որովհետև կոշտ ու կոպիտ արտահայտություններիս հետ, երբեմն սիրալիրության նենց պոռթկումներ եմ ունենում, որ էդ օրվա դոզան նույնիսկ շատ էլ սովորական էր:

Ընտրեցի տունդարձի հին ճանապարհս: Կանգնած էի խաչմերուկի եզրին: Նայեցի աշխարհիս ուղղությամբ, մտովի ժպտացի ու քայլերս վստահորեն ուղղեցի հին ճանապարհով:

Ջահելը սպասում էր: Էդքան էլ կանխատեսելի: Նույնիսկ ժպտացի:

Անսպասելիությունից շշմեց: Չէր պատկերացրել, թե երեսին կարող եմ ժպտալ:

Առանց մի բան ասելու՝ ճամփես շարունակեցի: Ինքը, բնականաբար, հետևեց: Ես արհամարհեցի:

-Մի՛րոպե:

Քայլում եմ:

-Հըն մի՛րոպե:

Շարունակում եմ ճամփես, իսկ որոշումն ի կատար ածելու գիտակցությունից վիզս հաստացել ու մի տեսակ պնդացել էր: Ամբողջ մարմինս ձգվել ու պատրաստ էր, ինչպես հովազը՝ զոհին մի ցատկով տապալելուց առաջ:

Գնացի մոտակա շենքի մի մուտք, որտեղ մարդ-մուրդ չէր երևում: Հետևիցս կրնկակոխ գալիս էր: Մտա մուտք: Մարդ չկար: Շրջվեցի դեպի ինքն ու լայն ժպտացի:

-Մի՛րոպե:

-Ոչ մի թոպե,-ասեցի, ու զույգ ձեռներիս հինգ մատները մագիլի դայրա օդում հարձակման պոզա ընդունեցին:

Մեկ ուզեցի զույգ մատներս կոխեմ աչքերի բնի մեջ ու գլախառը հանեմ: Հետո փոշմանեցի: Ուզում էի տեսնել աչքերի դատարկության սկզբնական վիճակը:

Հաջորդ թոպեն արդեն աչքերի մեջ՝ լեզվի վրա սառած մնաց, որովհետև զույգ ձեռներս թափով հետ տարա ու մխրձեցի մարմնի մեջ: Մատներս ներթափանցեցին ներս ու ժխսահոտ օրգաններից բռնած ջահելին մոտ քաշեցի, որ ուղիղ նայեմ աչքերի մեջ:

Մի թոպե: Ա՞նը հա քեզ՝ մի թոպե:

Ձեռներս հանեցի ու ինչքան ուժ ունեի կրունկիս ծերը հագցրի տանձին: Ցավից կռացավ: Հո՛ւպ, լոյլող ջան: Մի թոպե դգվի: Լոյլող բոյը դգեցի: Մի ձեռս կոխեցի սրտի ուղղությամբ, մյուսով ցխում էի դեմքը: Մատերս ծալել ու ամեն մեկը դարձրել էի պոպոք: Ամեն հարվածից հետո շագանակագույն ու տհաճ մաշկի վրա մի պոպոքաչափ տեղ էր բացվում: Մենակ աչքերին չէի խփում: Որ տենայի, թե ո՞նց ա մեջը գրվում շուրթերի վրա սառած մի թոպեն: Ես քեզ 48 թոպե:

Լոյլողի տկար ուղեղը ժամանակին չէր հասցրել ադապտանալ իրադարձությունների անսպասելի շրջադարձին ու բերանից դուրս պրծած ոռնոցը մնացել էր սկզբնական

վիճակում. մի րոպեի վախտ սիրտն արդեն կանգնել էր: Բայց էդ ինձ չէր հանգստացնում: Վիզս մի ուրիշ տեսակ ձգվել ու ողնաշարս փշաքաղվել էր: Ձեռներս հանեցի ու նորից խրեցի ջանդակի մեջ: Ձեռներս ու ռունգերս դողդողում էին, ու լավ չէի կարում ջոկեմ, թե որտեղ ա սիրտը: Պատառոտեցին ջահելի դռն ու երևան հանեցի սիրտը: Ձեռներս զգուշորեն հետ հանեցի ու նայեցի: Արյուն չկար: Գիտեի, որ լոյլողը մարդկային տրամաբանությունից դուրս ա: Սիրտը դեռ թփթփում էր: Սունկիցս հանեցի երկար ու նույն առավոտ՝ սուրճի ծեսից հետո սրված մսի դանակը: Հարված: Դիպուկ էր: Դանակը խրեցի սիրտն ու մի լավ խառնեցի: Հետո դանակահարեցի ամբողջ մարմինը՝ առաջացնելով կլոր 48 հատ բացվածք: Ամբողջ ընթացքում հայացքս չեմ կտրում աչքերից, որի մեջ մեծ-մեծ տառերով գրած էր՝ «ՄԻ ՐՈՊԵ»:

Վերջացրի: Դանակը պետք տեղում թողնել պետք չէր: Թեպետ ոչ մի արյուն էլ չկար: Կամացուկ նայեցի կողքերս: Մարդ չկար: Դանակը դրի պայուսակս ու դուրս էկա մուտքից:

Արևը պայծառ շողում էր, իսկ ինձ սպասում էին փոքրիկ ուրախություններս:

\*\*\*

Առավոտյան տարածվեց գույժը, որ քաղաքի N թաղամասի մուտքերից մեկում անմարդկայնորեն մի ջահել էր սպանվել: Լոյլողի մարմինը գազանաբար մասերի էր ծվատված: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց ջահելի անվնաս աչքերին կպած 48 քառակուսի սանտիմետր մակերես ունեցող մի թուղթ, որի վրա սևով սպիտակի վրա գրած էր՝ «ՄԻ ՐՈՊԵ»:

Ասում են՝ ջահելի մոր բերանը ցավից պապանձվել էր: Ջահելին մեր էր ծնել, ինչպես նաև ինձ: